

2023

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Շիրակի մարզ ք. Արթիկ Ալիխանյան Եղբայրների փողոց 3/1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ /լրամշակված/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Շիրակի մարզ ք. Արթիկ Ալիսանյան Եղբայրների փողոց 3/1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

/լրամշակված/

«ՔՎԷ նախագիծ» ՍՊԸ տնօրեն

Է. Քոչարյան



Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	10
1.5.1	Ներկա վիճակի նկարագիր.....	10
1.5.2	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	11
1.5.3	Ջրամատակարարում և ջրահեռացում.....	15
1.5.4	Ջեռուցում.....	18
1.5.5	Օդափոխություն	18
1.5.6	VRF համակարգ	20
1.5.7	Էլ. մատակարարում.....	20
1.5.8	Էներգախնայողության միջոցառումներ.....	20
1.5.9	Կանաչապատման աշխատանքներ.....	20
1.5.10	Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ.....	21
1.5.11	Թափոնների կատարում.....	24
1.5.12	Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ.....	25
1.5.13	Գլխավոր հատակագիծ.....	26
1.5.14	Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ.....	27
1.5.15	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց.....	28
1.5.16	Տեղագրական հանույթ.....	29
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	30
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	31
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են	32
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	33
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	35
2.3.1	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	35
3.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	37
3.1	Ռեկլեֆի տեղագրական ու երկրաբանական պայմանները	37
3.2	Տեղամասի երկրաբանա – լիթոլոգիական կառուցվածքը.....	37
3.3	Հողային ռեսուրսներ	38
3.4	Հիդրոերկրաբանություն	39

3.5	Կլիման.....	40
3.6	Զրային ռեսուրսներ.....	42
3.7	Բուսական և կենդանական աշխարհ.....	49
3.7.1	Բուսական աշխարհ.....	49
3.7.2	Կենդանական աշխարհ.....	51
3.8	Վարչական տարածքի սոցիալ տնտեսական և էկոլոգիական բնութագիրը	52
3.9	Մթնոլորտային օդ.....	53
3.10	Պատմության և մշակույթի հուշարձաններ	54
3.11	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	57
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵԳՈՒԹՅԱՆ ԲԱԳԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵԳՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒԳՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈԳԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	58
4.1	Ռիսկերի գնահատում	59
4.2	Արտանետումների աղբյուրները	59
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	60
4.3.1	Մթնոլորտային օդ.....	60
4.3.2	Զրային ռեսուրսներ	60
4.3.3	Հողային ռեսուրսներ	60
4.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	61
4.3.5	Հակահրդեհային միջոցառումներ.....	62
4.3.6	Աղմուկ և թրթռում.....	62
4.3.7	Թափոնների կառավարում	63
4.3.8	Տարածքի բարեկարգում կանաչապատում.....	63
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ ՊԼԱՆ.....	64
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱԳՆՈՂ ՄԻՋՈԳԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	65
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	68
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՆԿ.....	70
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	71

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	«ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ Շիրակի մարզ ք. Արթիկ, Ալիխանյան Եղբայրների փողոց 3/1
Նախնական գնահատման հայտի մշակող՝	Ա/Ձ Արամ Գալոյան ՀՀ ք. Երևան Սևանի փ. 2. 86/2 galoyan.aram@gmail.com հեռ. +374 99 994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բժշկական կենտրոն:

Բժշկական կենտրոնի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզ ք. Արթիկ Ալիխանյան Եղբայրների փողոց 3/1 հասցեում:

Բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Արթիկ քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության

մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Նորք - Մարաշ վարչական շրջան, Դավիթ Բեկի փողոց 93/4 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենք կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (03.05.2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) – կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության

վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադինամիկության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

- 1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Բժշկական կենտրոնի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզ ք. Արթիկ Ալիխանյան Եղբայրների փողոց 3/1 հասցեում:

Հողատարածքի բնութագրերը՝

Կադաստրային ծածկագիրը՝ 08-002-0068-0009, 0008

Մակերեսի չափը (հա)՝ 1.5, 1

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողամասը ազատ է կառուցապատումից, առկա են կիսաքանդ հիմքեր, որոնք քանդման ենթակա են: Հողամասը ազատ է ծառաթփային բուսականությունից:

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հողի բերրի շերտը ըստ երկրաբանական ուսումնասիրության կառուցապատման ենթակա տարածքում բացակայում է:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ ՀՀ Շիրակի մարզ Արթիկ քաղաքի Ալիխանյան Եղբայրների փողոց 3/1 հասցեում՝ 1.50 հա, մակերեսով հողատարածքի վրա, իսկ 1.0 հա հողատարածքի վրա նախատեսվում է միայն արևային ֆոտովոլտայիկ կայանի տեղադրում: Վերջինս հանդիսանում է բլրոտ տարածք և ոչ հարմար կառուցապատման համար:

Նախագիծը հանդիսանում է տեղակապման նախագիծ՝ ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման նախագծի օրինակով:

Տեխնիկատեսական ցուցանիշներ՝

Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 25 000 մ²

Կառուցապատման մակերեսը 15 210 մ²/60.84%/, որից՝

- Բժշկական կենտրոն՝ 2585 մ²/17.00%
- Օժանդակ կառույցներ՝ 275 մ² / 1.80%
- Օժանդակ կառուցապատում՝ 4167 մ² /27.40%
- Ճանապարհներ, անցուղիներ, ավտոկայանատեղեր 4123 մ² / 27.10%/
- Մայրեր եվ եզրամայրեր 4060 մ² / 26.70%/

Կանաչապատ տարածքներ 9 790 մ²/ 39.16%/

Բարեկարգման աշխատանքներ՝

Ասֆալտ- 4123 մ²,

Ասֆալտե մայրեր- 1122 մ²,

Ամրանավորված բետոնե սալերով երեսպատում – 735 մ²,

Բետոնե սալիկներով երեսպատում - 1740 մ²,

Բազալտե սալահատակ - 430 մ²,

Բրեկչա- 32 մ², Սպիտակ գլաքար- 7 մ²,

Բազալտե եզրաքար / 150x300մմ - 940 մ²,

Բազալտե եզրաքար / 100x200մմ - 1055 մ²

- Առանձնացված են բժշկական կենտրոնի կանաչապատ տարածքները, անցուղիները, կարգավորված են այցելուների հոսքերը, հիվանդների ընդունումը, գլխավոր եվ օժանդակ կառույցների տարածքները:
- Բժշկական կենտրոնի մուտքը նախատեսված է Լմբատ կոչվող թաղամաս տանող փողոցից, որտեղից կազմակերպված է շրջանցող ավտոճանապարհ, մոտեցում դեպի շտապօգնության ընդունարան եվ հետիոտն մոտեցում դեպի հիվանդանոցի գլխավոր մուտք և պոլիկլինիկական բաժանմունք:
- Ավտոկայանատեղեր են նախատեսված նաև տարածքի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան, հարավային հատվածներում:
- Շտապօգնության կայանը իր ավտոկայանատեղով գտնվում է ԲԿ-ի հյուսիս-արևելյան հատվածում:

Բարեկարգվող տարածքի հարավային հատվածում նախատեսվում է նոր կաթսայատան կառուցում: Կաթսայատունը նախատեսվում է կահավորել 3 հատ կաթսաներով՝ ջրատաքացուցիչ կաթսա՝ 2հատ, Q=300ԿՎՏ հզորությամբ, ջրատաքացուցիչ կաթսա՝ 1հատ, Q=400ԿՎՏ հզորությամբ:

Նոր կաթսայատան շինությանը կից գտնվում է վառելիքի պահեստը, իսկ հարավ-արևմտյան հատվածում տեղակայված են արևային ջրատաքացուցիչները: Բարեկարգվող տարածքի արևելյան հատվածում է նախատեսվում տրանսֆորմատորային ենթակայանը /62.0 քմ, տրանսֆորմատոր 630 կՎՏ/ և արևային ֆոտովոլտային կայանը:

Արևային կայանի հզորությունը՝ 151.2կՎՏ պիկային հզորությամբ, 308 հատ 545 ՎՏ միաբյուրեղ ֆոտովոլտային վահանակներ /ՖՎ/, հաստատուն հոսանքի պղնձե մալուխ 1x4մ² (DC) /3000մ/, ալյումինե մալուխ 1x150 մմ² հատվածքով-450մ, ալյումինե մալուխ 4x25 մմ² հատվածքով -90մ

- Նախատեսված են թեքահարթակներ՝ ապահովելով անհրաժեշտ հարմար մոտեցում հիվանդների եվ շտապօգնության մեքենաների համար: Կայանատեղերից փողոցից դեպի բժշկական կենտրոն են տանում հետիոտնի ուղղորդիչ գծանշումով, նախազգուշացնող մակերևույթով ճեմուղիներ նախատեսված տեսողության խնդիր ունեցող մարդկանց համար:
- Տարածքը բարեկարգված է և կանաչապատված: Նախատեսվում է իրականացնել թվով 5 ծառատեսակների 68 հատ և 320մ թփատեսակների տնկում, 2740 քմ սիզամարգի կառուցում:

Տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ նախատեսվում է կառուցել 55 մահճակալանոց բժշկական կենտրոն՝ մեկտեղելով հիվանդանոցային ու ամբուլատոր բոլոր ծառայությունները մեկ մասնաշենքում՝ ընդհանուր մակերեսը շուրջ 7089 քմ, որից՝ 1186 քմ պարզագույն թաքստոց և 5903քմ բժշկական կենտրոն:

Շենքի արտաքին չափսերն են 52.4x76մ: Շենքի կոնստրուկտիվ համակարգը ե/բ կարկասային է, միջհարկային ծածկերը և վերնածածկը իրականացված են ե/բ մոնոլիտ սալերից, տանիքը հարթ է: Հարկերի միջև բարձրությունը 3.6 մ է:

Նախատեսված է կենտրոնը հագեցնել ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

Շենքը բաղկացած է երկու եռահարկ և մեկ երկհարկանի մասնաշենքերից: Առաջին հարկը զբաղեցնում են շտապօգնության, կենտրոնական ախտահանման, լաբորատոր և ախտորոշիչ, պոլիկլինիկական և ինֆեկցիոն բաժանմունքները, երկրորդ հարկը՝ վիրահատական, ինտենսիվ, վիրաբուժական, մանկական և մեծահասակների թերապևտիկ բաժանմունքները, երրորդ հարկը՝ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը, ադմինիստրատիվ մասը:

Նախագծի ճարտարապետական մասով նախատեսված են հետևյալ սենքերը՝

- ընդունարան և անհետաձգելի բուժօգնության ծառայություն,
- ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք,
- պոլիկլինիկական բաժանմունք,
- վիրաբուժական բաժանմունք (5 մահճակալ), մանկաբարձագինեկոլոգիական (12 մահճակալ) բաժանմունք, մեծահասակների թերապևտիկ ու մանկաբուժական բաժանմունք (30 մահճակալ) և ինֆեկցիոն բաժանմունք (8 մահճակալ),
- շտապ բուժօգնության կայան՝ մեկ հերթապահ բրիգադի հաշվարկով,
- ինտենսիվ թերապիայի բաժանմունք (5 մահճակալ),
- անհետաձգելի բուժօգնության ծառայություն (3 մահճակալ),
- արյան պահպանման սենք
- օժանդակ ծառայությունների սենքեր, այդ թվում՝ կենտրոնական ախտահանում, լվացքատուն, ներհիվանդանոցային դեղատուն, ինժեներատեխնիկական սենք:

Բժշկական կենտրոնի շենքի արտաքին երեսապատումը նախատեսվում է իրականացնել ֆիբրոցեմենտե և բազալտե սալերով՝ հատուկ մետաղական կարկասով, հանքային բամբակից ջերմամեկուսիչ շերտով: Պատուհաններն իրականացվում են ալյումինե ջերմակամրջակե պրոֆիլներով, դռները՝ կոմպոզիտ նյութերից պատրաստված, ջրակայուն պլաստիկե և ալյումինե, միջնապատերը գիպսաստվարաթղթե համակարգով և բետոնե միջնորմային բլոկներից, ներքին հարդարումը ջրակայուն լատեքսային բարձրորակ ներկով, իսկ վիրահատարաններում և ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում՝ հակասեպտիկ լատեքսային ներկով: Առաստաղները արմատոնգ տիպի են՝ կախովի: Հիվանդասենյակներում, պոլիկլինիկական բաժանմունքում հատակները նախատեսված են վինիլային, վիրահատարաններում և ինտենսիվ թերապիայում՝ հակաստատիկ վինիլային ծածկույթ, առաջին հարկի միջանցքում՝ կերամոգրանիտ, սանհանգույցում՝ խեցեսալիկ: Բժշկական կենտրոնը համալրված է հենաշարժային համակարգի խախտումներ և

հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, վերելակներ):

Նախագծի ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցվել են պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումները:

Աշխատանքային գծագրերում որպես պայմանական 0.000 նիշ ընդունված է տեղագրական հանույթի 1771.65 նիշին:

Նախագիծը մշակված է ՀՀ-ում գործող հետևյալ շինարարական նորմերին համապատասխան՝

- ՇՆկԿ III-10-75 <<Տարածքների բարեկարգում>>

- ՇՆկԿ 3.02.01-87 <<Հողային աշխատանքներ>>

- ՄՆԻՊ 2.07.01.89 <<Քաղաքաշինություն: Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում,

- ՄՆԻՊ 2.08.02.89 Հասարակական շենքեր և շինություններ,

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման՝ <<ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ

կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>>

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ (պարզ) թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր>>

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թվականի <<ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում>> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին>> N263-Ն հրաման,

- ՀՀ կառավարության 13.12.2007թ «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշում,

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ <<Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին>> թիվ 43-Ա հրաման,

- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <<Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին>>
- ՀՕ-110-Ն 21.06.2014թ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
- ՀՀ կառավարության 23.06.2011թ <<Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում եվ հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին>> թիվ 879-Ն որոշման կարգը պահանջներ
- ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որոշում. <<Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին>>:
Նախագիծը համաձայնեցված է՝
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,
- համայնքի ղեկավարի,
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,
- ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ՝ համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի (գործոնների) առկայությամբ
- Նախագիծը համաձայնեցված է ոլորտի գլխավոր կարգադրիչ՝ ՀՀ Առողջապահության նախարարության հետ:
- Շինության դասը՝ IV :
- Շենքի դասը՝ ըստ հրդեհավտանգավորության դասակարգման՝ Վ (C):
- Շենքի հրակայունության աստիճանը՝ I:

1.5.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի բժշկական կենտրոնի կառուցման նախագծի ջրամատակարարման և ջրահեռացման մասը մշակվել է համաձայն առաջադրանքի,

ճարտարապետաշինարարական գծագրերի, ՇՆ-ՋԿ 40-01.01-2014 գործող շինարարական նորմերի և կանոնների, Վեոլիա ջուր ՓԲԸ-ի կողմից տրված ՎՎ 6060 տրված 17.11.2022թ:

Ներքին ցանց

Ջրամատակարարում և կոյուղի մասի նախագծում նախատեսվում են ներքին հետևյալ համակարգերը՝ բժշկական կենտրոնի համար նախատեսված է երկու մուտքագիծ: Առաջին մուտքագիծը՝ դեպի շենք, իրականացվում է նախագծվող ջրագծից, իսկ մյուսը կաթսայատնից ջերմատարի խողակի միջով: Մուտքագծերի անցքը պատվում է ջրագազաանթափանց էլաստիկ նյութով:

Ջերմատարի խողակի մեջ խողովակաշարը ջերմամեկուսացվում է ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով: Ջրամատակարարման ներքին ցանցը օղակաձև է: Հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսված է հակահրդեհային ծորակներ: հակահրդեհային կանգնակները ընտրվել են Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրաեռակցվող, տաք և սառը ջրամատակարարման կանգնակները և սպառման խողովակաշարը պոլիպրոպիլենե խողովակներից: Քանի որ հակահրդեհային և խմելու տնտեսական ջրամատակարարման համակարգերը միասնական են , հետևաբար անհրաժեշտ է հակահրդեհային կանգնակը վերջին հարկում միացնել սառը ջրի կանգնակներին :

Տաք ջրամատակարարման սնուցումն իրականացվում է կաթսայատնից: Տաք և սառը ջրամատակարարման խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

Տաք ջրամատակարարման խողովակների համար, առաջին և նկուղային հարկերի ուղիղ հատվածներում , նախատեսվում են կոմպենսատորներ:

Փախստարանի համար նախատեսվում է կառուցել ջրի բաք 8,8մ³ տարողության: Ջրի ճնշումը ապահովելու համար նախատեսված է պոմպային տեղակայանք:

Համակարգի խողովակները նախատեսված են իրականացնել ներքին ցանցի համար d 50մմ և d 110մմ, կոյուղու պոլիվինիլքլորիդե (pvc) լայնուկավոր ԿՄ 21-26-100-80, իսկ արտաքին համակարգինը՝ d 160մմ տրամագծի ծալքավոր խողովակներից: կոյուղու հորիզոնական միացումները կատարվում են թեք ձևավոր մասերով: խոհանոցային կոնքերի միացումը կոյուղու համակարգին իրականացվում է 2 մմ շիթի ընդհատումով:

Ինֆեկցիոն բաժանմունքի համար նախատեսված է կոյուղու առանձին համակարգ: Ինֆեկցիոն բաժանմունքի կեղտաջրերը կուտակվում են TOPAZ-8 լոկալ կոյուղու մաքրման կայանի մեջ, որտեղ տեղադրված է նաև ուլտրամանուշակագույն լամպ YOB-SDB-550 խցիկով, ախտահանվում, վարակագերծվում են, ապա նոր լցվում կոյուղու դիտահոր:

Քանի որ փախստարանի հատակի նիշը գտնվում է հողի նիշից ցածր, հետևաբար վերջինիս համար նախատեսվել է կոյուղու առանձին համակարգ:

Փախստարանի կեղտաջրերը կուտակվում են կոյուղու պոմպային կայանքի մեջ, որի վրա տեղադրված պոմպերի միջոցով կեղտաջրերը մղվում են բակային ցանց:

Տվյալ նախագծում արտաքին կոյուղու համակարգը ներառված չէ, այն նախագծվում է մեկ այլ կազմակերպության կողմից:

Համակարգը նախատեսված է տանիքից անձրևաջրերի և ձնահալոցքների կեղտաջրերի հեռացման համար: Քանի որ Արթիկ քաղաքում բացակայում է հեղեղատար կոյուղու համակարգը, հետևաբար տանիքի կեղտաջրերը 0,00 նիշի առաստաղի տակով ինքնահոս հեռացվում են բակային ցանց:

Արտաքին ցանց

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի արտաքին ջրամատակարարման և կոյուղու նախագիծն իրականացված է պատվիրատուի և գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծում նախատեսված է արտաքին ջրամատակարարումն իրականացնելու համար նախագծել ջրագիծ $\Phi 50$ տրամագծով պոլիէթիլենային խողովակներով:

Ջրագծի ելակետային աղբյուր է հանդիսանում գոյություն ունեցող մետաղական $\Phi 108$ խողովակը:

Միացումն իրականացվում է էլեկտրաեռակցման միջոցով, տեղադրելով մետաղական $\Phi 50$ խողովակակտոր: Միացման տեղում նախատեսված է ե/բ դիտահոր՝ մետաղական մտոցով, գնդիկային փական $\Phi 50$, կեղտորսիչ $\Phi 50$, ջրափափ, հետադարձ փական $\Phi 50$, կցորդիչ մետաղ/պոլիէթիլեն, 57/50:

Արտաքին խողովակները իրակացվում է ստորգետնյա եղանակով պոլիէթիլենային HDPE Pn10 խողովակով: Արտաքին ջրագծը նախատեսված է իրականացնել 1.3մ խորությամբ:

Նախատեսվում է արտաքին կոյուղագծերը մոնտաժել ստորգետնյա եղանակով պոլիէթիլենային ծալքավոր SN4 $\Phi 200$ խողովակներով: Նախատեսվում է կոյուղու դիտահորերի տեղադրում 23 հատ:

Ջրագծի և կոյուղու համակարգերի մոնտաժումն ու փորձարկումը կատարվում է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերի ու կանոնների ՇՆուԿ 3.05.01-85:

Հողային բոլոր աշխատանքներն կիրականացվի այն բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիաները: Արտաքին ցանցերի իրականացման հողային աշխատանքների ծավալները ներառված են ընդհանուր հողային աշխատանքների ծավալների մեջ, որը ներկայացված է սույն հայտի 2.3 ենթաբաժնում:

1.5.4 Ջեռուցում

Մասնաշենքում նախատեսված է արհեստական շրջանառությամբ ջերմատարի վերին մատակարարումով փակուղային երկխողովականի ջրային ջեռուցման համակարգ :

Մայրուղային մատակարարող և հետադարձ խողովակները տեղադրվում են առաստաղի տակ :

Խողովակաշարի բաժանարար ճյուղերի վրա տեղադրվում են կարգավորման փականներ: Ջեռուցման համակարգում նախատեսվում է տեղադրել հիմնականում այլումինե ջեռուցման սարքեր, իսկ վիրահատական բաժանմունքներում պողպատե պանելային ջեռուցման սարքեր և պոլիպրոպիլենե խողովակներ: Հարմարավետության և էներգախնայողության նպատակով բոլոր ջեռուցման սարքերի վրա տեղադրվում են թերմոստատիկ և կարգավորող փականներ: Օդի հեռացումը համակարգից կատարվում է բարձր կետերում տեղադրվող ավտոմատ օդահաններով ջեռուցման սարքերի վրա տեղավոր օդի հեռացման փականներով: Հատակի հաստաշերտում տեղադրվող ջերմամատակարարող բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են:

1.5.5 Օդափոխություն

Շենքում նախատեսված է իրականացնել օդի ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ: Ներածման և արտածման ինքնուրույն համակարգերը ըստ սենյակների տրված են սարքավորումների բնութագրում: Ռենտգեն նկարահանման սենյակում ներածվող օդը տրվել է վերին գոտի, իսկ օդի արտածումը կատարվել է վերին և ներքին գոտիներից հավասարաչափ: Վիրասրահներում, ինտենսիվ թերապիայի և հետվիրահատական սենյակներում օդափոխությունը նախատեսվում է կատարել բժշկական լավորակման սարքերի միջոցով, որոնք տարբերվում են ստանդարտ լավորակման սարքերից նրանով, որ այդ սարքերում ներքին և արտաքին վահանակները պատրաստված են չժանգոտվող մետաղից և ներկվում են հակաբակտերիցիդ ներկով: Սարքի մեջ աղմկախլացուցիչը տեղադրված է հորիզոնական դիրքով, ազատ տեղ թողնելով ներքին մասում , ինչը հնարավորություն է տալիս լիովին լվանալ այդ հատվածը: Օդափոխիչը տեղադրված է բարձր մասում նույնպես ներկված է հակաբակտերիցիդ ներկով , ինչը հնարավորություն է տալիս այդ հատվածամասը նույնպես լվանալ: Այս սարքի մեջ, բոլոր հատվածամասերում տեղադրվում են լույսեր և դիտողական ապակիներ, նրա աշխատանքը վերահսկելու համար: Լուսավորության բոլոր սարքերը ջրակայուն են: Որպես կանոն, հիվանդանոցներում , օդի ներածումը և արտածումը իրականացվում է վերին գոտուց՝ ցածր արագություններով 0.3-0.5մ/վրկ: Ամեն մի վիրասրահի համար նախատեսված է առանձին օդափոխության ներածման և արտածման համակարգ : Նշված համակարգերում ներածման օդը պետք է անցնի մաքրման երեք աստիճան: Առաջին և երկրորդ մաքրման աստիճանը անցնում է կոնդիցիոների մեջ տեղադրված խոշորահատիկ և մանրահատիկ գտիչներով: Վիրահատարաններից օդի արտածումը կատարվում է երկու գոտուց՝ վերին և ներքին վերին

գոտուզ - 40%, առաստաղից 10սմ ներքև, ներքին գոտուզ - 60%, հատակից 60սմ վերև: Այս տարածքների համար, օդի շարժման արագությունը չպետք է գերազանցի 0.15 - 0.2 մ/վրկ:

Ամեն մի վիրահատարանի համար նախատեսված է առանձին օդափոխության ներածման և արտածման լավորակման սարքավորում: Բոլոր սան հանգույցներից, կեղտոտ պարագաների և թափոնների սենյակներից: Օդի քանակը կարգավորելու համար բոլոր ներածման և արտածման օդատարների վրա նախատեսվում են ձեռքի կարգավորման փականներ: Օդատարները անցնում են կախովի առաստաղով, գինկապատ թիթեղից են, որոնց համապատասխան հաստությունները բերված են անվանագանկում:

Ներածման օդատարները և ներածման տուփերը մեկուսացվում են K-Flex մեկուսիչով: Տանիքի հատվածում ներածման օդատարները մեկուսացվում են երկտակ:

Շենքը ունի նաև նկուղայն հարկ, որը օգտագոծվում է որպես պարգագույն թաքստոգ: Թաքստոգում նախատեսվել է օդափոխության համակարգ, որը հաշվարկված է ըստ գոյություն ունեցող նորմերի՝ բժշկական հաստատություններում պատասպարված անշարժունակ մեկ հիանդի համար՝ 20մ³/ժամ օդաքանակ: Թաքստոգում տեղակայված վիրահատարանում և ծնարանում օդափոխությունը ապահովում է 1ժամում ներհոսվող օդի 10-պատիկը:

Շենքում օդափոխությունը ապահովելու համար ընտրված է VRF-համակարգ, որի թարմ օդի ներհոսը մատակարարվում է շենքից 10.0մ հեռավորության վրա տեղադրված օդաընդունիչ ճաղաշարով: VRF-համակարգի սարքավորումների մոդելների տիպերը տրված են գծագրի վրա:

ԼԱՎՈՐԱԿՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՋԵՐՄԱ-ՍԱՌՆԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Լավորակման սարքերի ջերմաստիճանատակարարման համակարգը նախատեսված է երկխողովականի, դա նշանակում է, որ ձմռանը ջերմատաքացուցիչում շրջանառություն է կատարում կաթսայատնից եկող ջերմատարը՝ $T_1=800c$, $T_2=600c$, $\Delta t=200c$ խողովակաշարի միջոցով, իսկ ամռանը սառեցուցիչի մեջ շրջանառություն է կատարում չիլերից եկող սառը ջրի խողովակաշարերը $X_1=70c$, $X_2=120c$, $\Delta t=50c$:

2. Լավորակման սարքերի սառնամատակարարումը ապահովելու համար նախատեսված է տանիքում տեղակայել կոնդենսատորի օդային սառեցմամբ չիլեր՝ 3x100 կՎտ սառեցման հզորությամբ, էլ. էներգիայի ծախսը 34.0 կՎտ, քաշը 950կգ յուրաքանչյուրը:

3. Սառնամատակարարման համակարգի խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով "Kaiflex" տիպի: Ջերմաստիճանատակարարման համակարգի համար ընդունել պողպատե ջրագազային խողովակներ:

4. Մոնիտորինգից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման 0.6 ՄՊԱ ճնշմամբ, որից հետո կատարվում է փչամաքրում, այնուհետև՝ ամբողջ համակարգի լվացում ջրով:

1.5.6 VRF համակարգ

1. Շենքում նախատեսված է նաև VRF համակարգ՝ բժշկների կաբինետներում, միջանոցներում և հիվանդասենյակներում հովազում աահովելու համար:

VRF համակարգի սարքերը տեղադրված են առաստաղի տակ՝ ըստ սենյանների նշանակության: Համակարգը կարող է աշխատել նաև heating-ի համար:

1.5.7 Էլ. մատակարարում

Բժշկական կենտրոնի էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել կառուցելով համապատասխան հզորության ենթակայան: Նոր ենթակայանի 10 կՎ Էլ. մատակարարումն կարելի է իրականացնել «Արթիկ» 110/35/10Կվ ենթակայանի «Արթիկ 2» 10կՎ օդային գծից /տեխնիկական պայմանը կգված հավելվածների բաժնում/:

1.5.8 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսագում.
- Օդատարների ջերմամեկուսագում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

1.5.9 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Տարածքի բարեկարգման և արդիականագման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված գգափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է գանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղիան, փխրեզում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների ավարտին տարածքի կանաչապատման համար անհրաժեշտ 571 մ³ ծավալով հողի բերի շերտի ձեռքբերման վայրի կհամաձայնեցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ և կիրականացվի համաձայն ՀՀ գործող իրավական ակտերի:

1.5.10 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$


որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 9790 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 2$

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175 \text{ օր}$

$$W_{u.3} = (0.006 \times 9790) \times 2 \times 175 = 20559 \text{ մ}^3/\text{տարի}$$

Բարեկարգման և կանաչապատման հատակագիծ



ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ ПРЕДЛАГАЕМЫЕ ВИДЫ ДЕРЕВЬЕВ				
	Անվանում Наименование	Միջճառային հեռ. /մ/ Միջճառային հեռ. /м/	Պայմանական նշան Условное обозначение	Քանակ Кол-во
1	Սոսի արևելյան Восточный Платан	8		16
2	Թխկի սրտերև Клён остролистный	6		14
3	Ալբիցիա լենկորանյան Альбиция ленкоранская	7		9
4	Եղևնի արծաթափայլ Ель серебристая	6		13
5	Լացող ուռենի Ива Белая	6		16
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԹՓԱՏԵՍԱԿՆԵՐ ПРЕДЛАГАЕМЫЕ ВИДЫ КУСТОВ				
1	Տոսախ մշտադալար (սամշիտ) Самшит вечнозелёный	0.5		280 մ
2	Տոսախ մշտադալար (սամշիտ) Самшит вечнозелёный	1.5		41 մ

1.5.11 Թափոնների կառավարում

Արթիկի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռագումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարագմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:


Շինաշխատանքների իրականագման ընթացքում առաջագող թափոնների տեսակները և քանակները՝

Ծածկագիրը «Թափոնների գանկի»	Անվանումը	Վտանգավորության դասը	Քանակը, շին/ժամանակ
9120060101004	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	IV	120 մ ³
9120040001004	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	0.9մ ³
3140110008995	Փորման աշխատանքների ընթացքում առաջագած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	30342.7մ ³

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բժշկական կենտրոնի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Բժշկական կենտրոնի շահագործման փուլում՝ բժշկական թափոնների (բուժօգնության, վիրահատական և այլնի արդյունքում առաջացած) գործածության՝ ներառյալ դրանց ըստ տեսակի առանձնացման, տարողությունների և բեռնարկղերի մեջ տեղադրման, մեկուսացման, տեղափոխման, վնասագերծման և վարակագերծման բոլոր փուլերը իրականացվելու են ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելվածների համաձայն:

1.5.12 Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ




1.5.14



1.5.15 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ НАИМЕНОВАНИЕ РАБОТ	ԱՄԻՍՆԵՐ МЕСЯЦЫ																													
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30
1	ՆԱԽԱԳԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ПОДГОТОВИТЕЛЬНЫЕ РАБОТЫ																														
2	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ЗЕМЛЯНЫЕ РАБОТЫ																														
3	Ե/Ք ՍՏՆՈՂԻՏ ՀԻՍՏՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ УСТ-ВО МОНОЛИТНЫЕ Ж/БЕТОННЫЕ ФУНДАМЕНТОВ																														
4	Ե/Ք ՍՏՆՈՂԻՏ ՍՅՈՐՆԵՐԻ և ՀԵՏՈՐՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ УСТ-ВО МОНОЛИТНЫХ Ж/Б КОЛОНН И РИГЕЛЕЙ																														
5	Ե/Ք ՍՏՆՈՂԻՏ ՇԱՏԿԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ УСТ-ВО МОНОЛИТНЫХ Ж/БЕТОНЫХ ПЕРЕКРЫТИЯ																														
6	ՊԻՏՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ КЛАДКА СТЕНЫ																														
7	ՏԱՆԻՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ КРОВЕЛЬНЫЕ РАБОТЫ																														
8	ՄԻՋՆՈՐՄԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ УСТРОЙСТВО ПЕРЕГОРОДОК																														
9	ՀԱՏԱԿՆԵՐՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ УСТРОЙСТВО ПОЛОВ																														
10	ՊԻՏՈՒ-ՀԱՆՆԵՐԻ և ԴՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒՄ УСТАНОВКА ОКОН И ДВЕРЕЙ																														
11	ՄԱՆ. ՏԵԽ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ САН. ТЕХ. РАБОТЫ																														
12	ԷԼ.ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ЭЛ. РАБОТЫ																														
13	ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ОТДЕЛОЧНЫЕ РАБОТЫ																														
14	ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆՏԱՅՈՒՄ МОНТАЖ СИСТЕМЫ БЕЗОПАСНОСТИ																														
15	ՀՐԳԵՀԱՄԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆՏԱՅՈՒՄ МОНТАЖ ПРОТИВОПОЖАРНОЙ СИСТЕМЫ																														
16	ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ БЛАГОУСТРОЙСТВА ТЕРРИТОРИИ																														

1.5.16 Տեղագրական հանույթ



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարծքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բազի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտագույն անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականագման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականագնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականագումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորագված (ընդհանրագված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի՝ աշխատանքների ընդհանրագված փուլի՝ կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ՝ կոշիկ)՝ համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (գանկապատում՝ լուսավորում՝ օդափոխում՝ պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)՝ սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^a անվտանգության տեխնիկայի» արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահիդրոհային անվտանգության վերաբերյալ անգ է կազմվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման» հրահանգման ժամանակին և որակով անցկացման» անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման» արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 30 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր գանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակագույցի և օրագույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է QTZ125 մակնիշի աշտարակային կոունկ: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրագույցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բազ փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզանական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կոունկի գործողության գոտում բազառել կիզ շենքի աշտարակային կոունկի

գործողությունը տվյալ գոտում/։ Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով։

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականագման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով։ Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ագդարարի ագդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը։

Կռունկով բեռի տեղափոխումը բազառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը։

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով։ Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականագվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների։

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից։ Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում։

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոգառումներ իրականագնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ։ Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով։

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով։ Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ։ Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը։ Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ։

Բոլոր բնապահպանական միջոգառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոգառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում։

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են

Բժշկական կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ

- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական գանգեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանագանկը բերված է աղյուսակ 1-ում:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանագանկ՝

Աղյուսակ 1

ՄԵՔԵՆԱՆԵՐ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ПЕРЕЧЕНЬ ОСНОВНЫХ СТРОИТЕЛЬНЫХ МАШИН, МЕХАНИЗМОВ И ОБОРУДОВАНИЯ				
Գ/Գ	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՄԱՍԿԵՆ МАРКА	ՉԱՓ. ՄԻԱՎ ЕД.ИЗМ	ՔԱՆԱԿ КОЛ - ВО
1.	ԲՈՒԼԴՈՋԵՐ БУЛЬДОЗЕР	ԴՋ-43 ДЗ-43	ՀԱՏ ШТ	1
2.	ԷՔՍԿԱՎԱՏՈՐ ЭКСКАВАТОР	ԷՕ-2621Ա ЭО-2621А	ՀԱՏ ШТ	1
3.	ԱՇՏԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՌԻՆԿ БАШЕННЫЙ КРАН	ԿՐ- 403(ԿՐ. 160.2) КБ- 403(КБ. 160.2)	ՀԱՏ ШТ	2
4.	ԱՎՏՈԿՐԱՆ АВТОКРАН	ԿԱ - 5473 КС- 5473	ՀԱՏ ШТ	1
5.	ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ԲԵՈՆԱՍԱՐ 10 Տ БОРТОВЫЕ АВТОМОБИЛИ 10 т	ԿԱՄԱՋ КамАЗ	ՀԱՏ ШТ	2
6.	ԱՎՏՈՒՆՔԱԹԱՓ 3.5 Տ АВТОСАМОСВАЛЫ	ԿԱՄԱՋ КамАЗ	ՀԱՏ ШТ	2
7.	ԲԵՏՈՆԱԽԱՆՈՒՉ АВТОБЕТОНОРАСТВОРОВОЗ	ԱՍ - Օ403Ա АС - 403А	ՀԱՏ ШТ	1
8.	ԱՎՏՈՐԵՏՈՆԱՇԱՂԱԽԱՍԱՐ АВТОБЕТОНОСМЕШИТЕЛЬ	ԱՐ - 69 СБ - 69	ՀԱՏ ШТ	1
9.	ԲԵՏՈՆԱՊՈՄՊ БЕТОНОНАСОС	Ս - 296 С - 296	ՀԱՏ ШТ	1
10.	ԵՈՒԿՑՈՂ ԱԳՐԵԳԱՏ СВАРОЧНЫЙ АГРЕГАТ	ՍՏԷ - 34 СТЭ - 34	ՀԱՏ ШТ	2
11.	ԵՈՒԿՑՈՂ ԱԳՐԵԳԱՏ ГАЗОСВАРОЧНЫЙ АГРЕГАТ	ՄՈՎ - 1.2 МРВ - 1.2	ՀԱՏ ШТ	2
12.	ՉԱՅԼԻԿՈՆԱՅԻՆ ՄԵՔԵՆԱ СВЕРЛУЩИЕ МАШИНЫ	ԻԷ - 1808 ИЭ - 1808	ՀԱՏ ШТ	2
13.	ԹՐԹՈՒՉ ԱՍՐԱՅՎՈՂ ВИБРАТОРЫ ПРИКРЕПЛЯЕМЫЕ	Ս - 821 С - 821	ՀԱՏ ШТ	4
14.	ԹՐԹՈՒՉ ՍԱԿԵՐԵՍԱՅԻՆ ВИБРАТОРЫ ПОВЕРХНОСТНЫЕ	ԻՎ - 2 ИВ - 2	ՀԱՏ ШТ	4
15.	ԹՐԹՈՒՉ ԽՈՐՔԱՅԻՆ ВИБРАТОРЫ ГЛУБИННЫЕ	Ս - 697 С - 697	ՀԱՏ ШТ	4
16.	ԹՐԹՈՒՉ ԽՈՐՔԱՅԻՆ ВИБРАТОРЫ ГЛУБИННЫЕ	Ս - 801 С - 801	ՀԱՏ ШТ	4
17.	ՆԵՐԿԱՑՐԻՉ КРАСКОПУШКА	Ս - 536 Ա С - 536 А	ՀԱՏ ШТ	2
18.	ՕԴԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ВОЗДУХОНАГРЕВАТЕЛЬ	ՈՒՎԱ - 100 УСВ - 100	ՀԱՏ ШТ	2

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիզբավորումը և յուղումը իրականագվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականագման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտագված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 30962մ³

Հետլիզբ՝ 619.3 մ³

Տեղափոխում՝ 30342.7 մ³

Ավելագված հողային զանգվածը կտեղափոխվի Արթիկի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 50 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 35 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 10 մարդ

2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բժշկական կենտրոնի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, գեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրգանի, հողի/գրունտի խոնավագման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ն.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 45 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 780 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 45 \times 0.025) \times 780 = 939.9 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.205 \text{ մ}^3/\text{օր.}$$

բ) Ջրգանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

$K_1 - 1 \text{ մ}^2$ օրական ջրգանի նորմը, 0.0015 մ^3 ,

$T -$ ջրգանի ժամանակահատվածը օրերով, 120

$U_1 = 500 \times 0.0015 \times 120 = 90 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$

c) Անիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_2 = S_2 \times K_2 \times T$, որտեղ՝

$S_1 -$ լվացվող ավտոմեքենաների քանակը, 5 հատ,

$K_1 -$ միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ^3 ,

$T -$ ժամանակահատվածը օրերով, 780

$U_2 = 5 \times 0.14 \times 780 = 546 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.7 \text{ մ}^3/\text{օր}$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի $1575.9 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}$

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոգուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայամանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեգում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադր:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

3.1 Ռելիեֆի տեղագրական ու երկրաբանական պայմանները

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: Արթիկ համայնքի տարածքը ընկած է Արագած լեռան հյուսիս արևմտյան լանջին և իր մեջ ընդգրկում է Մանթաշի ձախակողմյան Գոմշաձոր և Մովրովի վտակների միջին հոսանքի հովիտները: Ուսումնասիրվող տարածքը լեռնագրաֆիական տեսակետից տեղադրված է Արագած լեռան հյուսիսարևմտյան լեռնաբազուկների բարձր և միջին լեռնային գոտիներում, հյուսիս-արևմտյան երոզիոն-հողմնահարման լանջերի վրա: Տարածքը, ընդհանուր առմամբ, իրենից ներկայացնում է լավային հարթավայր, բաժանված սարավանդերով, կապված լավային հոսքերի տարբեր գեներացիաների զարգացման հետ: Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային (էֆֆուզիվ) և Չորրորդականի հրաբխածին նստվածքային ալյուվիալ-պրոլյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ և տեխնածին նստվածքները: Ժամանակակից տեխնածին նստվածքները հանդիպում են տուֆերի վերամշակման տեղերում, առանձին կուտակումների տեսքով նրանք ներկայացնում են քարհանքերի վերամշակումների մնացուկները և հիմնականում կազմված են տուֆի բեկորներից, երբեմն կավի հետ խառնված, նրանց հզորությունը 3-8մ է:

Այսպիսով, Արթիկ քաղաքի երկրաբանական հիմք են հանդիսանում անդեզիտա-բազալտային լավային հոսքերը և վերին չորրորդականի տարիքի ալյուվիալ-պրոլյուվիալային նստվածքները: Համայնքի տարածքում, ռելիեֆի համեմատաբար թեք մասերում, սարահարթի սարավանդներում և 8-10° թեքությամբ լանջերին դիտարկվում են երբեմն դենուդացիա, քարաթափեր, մակերեսային ողողում, տեխնածին փոփոխություններ, ջրածածկման, փլուզման գոտիներ, ինչպես նաև ողողումներ:

3.2 Տեղամասի երկրաբանա – լիթոլոգիական կառուցվածքը

Անցած փորվածքների ու մերկացումների տվյալների և դիտողական ուսումնասիրությամբ հաստատված է, որ տարածքի երկրաբանա– լիթոլոգիական կառուցվածքը պարզ է, երկրաբանական բարդությամբ վերաբերվում է առաջին կարգի, կազմված է չորրորդական գոյացումներից և ներկայացված է հետևյալ ինժ.–երկրաբանական տարրերով (ԻԵՏ):

ԻԵՏ – 1 լցովի գրունտներ – ենթակավեր, խիճ, շինարարական աղբ, տարբեր չափերով տուֆի բեկորներ ու բլոկներ:

Շերտի հզորությունը փոփոխական, մինչև 5...6մ,

տարածված է ամենուր,

Ըստ մշակման՝ I/II կ.–աղ.1-1, կ. 9Վ (CH՝II-IV-2-82):

ԻԵՏ – 2 տուֆալավաներ (Արթիկ տուֆ) բաց վարդագույն, միջին խտության և ամրությամբ, հեշտ մշակվող;

Շերտի հզորությունը 5...6մ. ըստ ռելիեֆի տարածումով,

տարածված է ամբողջ տեղամասում,

Ըստ մշակման՝ V/V կ.–աղ.1-1, կ. 38 (CHՊ-IV-2-82):

ԻԵՏ – 3 տուֆալավաներ խիտ – դժվար մշակվող, ձիգ, համեմատաբար մուգ գույներով:

Չի արդյունահանվել:

ԻԵՏ – 4 հրաբխային լիպարիտա-դացիտներ:

ԻԵՏ – 5 պիրոկլաստիկային տուֆեր – հիմնականում ձիգ, կաշուն, դժվար հորատվող,

սևա- գորշավունից մինչև կարմրավուն

Ըստ մշակման՝ - / VII կ.–աղ.1-1, կ.17 (CHՊ-IV-2-82):

3.3 Հողային ռեսուրսներ

Գործունեության ենթակա տարածքներում ամբողջովին բացակայում է հողային ծածկույթը: Հարակից տարածքների հողային ծածկույթը նույնպես դեգրադացված է տարբեր տեսակի ազդեցություններից՝ տեխնածին /մարդու գործունեության բացասական ազդեցությունների հետևանքով/ և բնական ճանապարհով (սելավ, ողողում, ջրհեղեղ և այլն) և այլն: Այս ամենը հետևանք է եղել այն բանի, որ հողերի ոչ ճիշտ օգտագործումից և հողային ծածկույթի և հողի բերրիության պահպանման միջոցառումները չապահովելուց իրականացվել է հողերի վատթարացման և քայքայման շարժընթաց, ինչի պատճառով բացակայում է հողային ծածկույթը:

Արթիկ քաղաքային համայնքի տարածքն ընդգրկված է լեռնատափաստանային բնական գոտում՝ 1750-1950 մ բացարձակ բարձրությունների սահմաններում: Այս գոտում ձևավորվել են տարբեր տիպի սևահողեր: Լեռնային սևահողերը, որոնք ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջին և ծանր կավավազային մեխանիկական կազմով են, իսկ ըստ քարքարոտվածության աստիճանի՝ հիմնականում թույլ քարքարոտ են (5-20 մ³/հա): Հաստատաուն հատիկա-կնձիկային կառուցվածքի հետևանքով այդ հողերն ունեն ջրա-օդային ռեժիմի նպաստավոր պայմաններ: Այս հողերում ուժեղ է արտահայտված քիմիական հողմնահարումը, որի հետևանքով հողաշերտում կրի, գիպսի, աղի պարունակությունը չնչին է: Կենսաբանական պրոցեսների համար կան ջերմության և խոնավության լավագույն պայմաններ, չնայած ամռանը նույնիսկ այս գոտում բույսերի վեգետացիայի համար ոռոգման կարիք է զգացվում:

Արթիկի տարածաշրջանի մշակովի հողերը հումուսի պարունակության առումով համարվում են միջին և բավարար հումուսային, որտեղ հումուսի պարունակությունը

տատանվում է 4-10 %-ի սահմաններում, իսկ հողի ռեակցիայի ցուցանիշը՝ pH-ը տատանվում է 6.4-8.0-ի սահմաններում. այսինքն հողերն ունեն հիմնականում չեզոք, երբեմն նաև թույլ հիմնային ռեակցիա: Տարածքի գյուղնշանակության հողերում չի դիտարկվել հողերի աղակալում, ալկալիացում, ճահճացում և աղտոտում տոքսիկ էլեմենտներով: Հողերի էկոլոգիական վիճակը կախված է նաև ոռոգման ջրի քիմիական կազմից և հանքայնության աստիճանից:

Արթիկի հողատարածությունները տարբեր սատիճանի էրոզացվածություն ունեն: Հողերի որակի վրա ազդում է նաև քարքարոտությունը: Գյուղատնտեսական հողատեսքերին, ինչպես նաև բնակավայրերին վնաս են հասցնում նաև հեղեղները և սահքերը:

Հողերի դեգրադացմանը, բացի էրոզիոն պրոցեսներից, նպաստում են նաև հանքերի բաց շահագործումները և շահագործումից թափոնակույտերի առաջացումը:

Հողային ծածկույթի աղքատացմանը նպաստում է նաև հողային շերտի աղտոտվածությունը, որի հիմնական պատճառներն են.

- պարարտանյութերի ու թունաքիմիկատների չվերահսկվող օգտագործումը,
- արդյունաբերական, կոմունալ-կենցաղային, անասնապահական օբյեկտների կեղտաջրերը:

Հողային ծածկույթի պահպանման համար առաջնահերթ միջոցառումներն են հակաէրոզիոն մի շարք միջոցառումներ (ագրոմելիորատիվ, անտառմելիորատիվ, հիդրորտեխնիկական, հակահեղեղային, հակասողանքային):

Տարածաշրջանի հողերի ոռոգման ջրանցքները ջուր են ստանում Մանթաշի աջափնյա ջրանցքից /որի ջրաղբյուրը Մանթաշ գետն է, իսկ գետի հոսքը կարգավորվում է Մանթաշի ջրամբարից/ և Արթիկջուր գետից, որը Մանթաշ գետի ձախափնյա վտակն է: Գործունեության ենթակա տարածքները, որտեղ իրականացվելու է ծրագրով նախատեսված անտառպուրակի և հանգստի գոտու հիմնումը, ամբողջովին դեգրատացված տարածքներ են՝ խախտված ընդերքօգտագործման աշխատանքներից: Տարածքն ամբողջովին զուրկ է հողային ծածկույթից և բուսականությունից: Տարածքում էրոզիոն երևույթներ և սողանքներ չեն դիտարկվել:

3.4 Հիդրոերկրաբանություն

Արմատական հիմքի ապարները, վերին Չորրորդականի անդեզիտա-բազալտները և միջին Չորրորդականի տուֆերը բնութագրվում են բարձր դրենաժային հատկությամբ, որի հետևանքով նրանցում, մինչև 100մ խորությունը, ստորգետնյա ջրեր չեն հանդիպում:

Դիտարկվող տարածքում Չորրորդականի բոլոր ապարները, անջուր են: Արթիկջուր գետի երկայնքով զարգացած են վերին Չորրորդականի ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ խճերը, ավազակավային լցանյութով: Այդ ապարներում հանդիպում են անշարժ ստորերկրյա ջրեր՝ երկրի մակերևույթից 1-5մ խորությունում: Խճերում պարունակվող

ստորերկրյա ջրերը քաղցրահամ են: Ջրաբեր հորիզոնի սնուցումը կատարվում է գետային ջրերի ինֆիլտրացիայի և մթնոլորտային տեղումների հաշվին: Այս ջրատար հորիզոնը, թույլ ջրաողողված է և դժվար թե էական հետաքրքրություն առաջացնի նրա տնտեսական օգտագործման համար: Նրանց ընդհանուր հանքայնացումը գտնվում է 0.2-0.4 գ/լ սահմաններում, ըստ աղային կազմի՝ նրանք հիմնականում հիդրո-կարբոնատային են (հազվադեպ՝ սուլֆատային), կալցիումային (հազվադեպ՝ մագնեզիումային կամ նատրիումային): Ընդհանուր կոշտությունը 2.9-6.2 մգ/էկվ սահմանում, կարբոնատայինը՝ 1.6-5.6 մգ/էկվ, pH-ը գտնվում է 6.8-7.8 սահմանում:

Ուսումնասիրվող տարածքում աղբյուրների կամ առվակների տեսքով ստորերկրյա ջրերի ելքեր չեն հայտնաբերվել:

Ըստ ելակետային սեյսմիկ վտանգի գնահատման ուսումնասիրվող տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.3 g հորիզոնական արագացման արժեքը:

3.5 Կլիման

Ստորև բերվում է Արթիկ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալները: Շրջանի կլիման չափավոր է, տաք, տևական ամառով և ցուրտ ձմեռով: Օդի բացարձակ ցածր ջերմաստիճանը -25°C է, բարձրը՝ +33°C, տարեկան միջինը՝ +6°C:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 550մմ: Քամու արագությունը ձմռանը 1-3մ/վ, ամռանը՝ 5մ/վ և ավելի, գերակշռում են հարավային ուղղության քամիները:

Ստորև բերված աղյուսակները բնութագրում են շրջանի կլիմայական ռեժիմն ըստ <<Արթիկ>> օդերևութաբանական կայանի (բացարձակ բարձրությունը 1750մ) տվյալները:

Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-96 <<Շինարարական կլիմայաբանություն>> նորմատիվային փաստաթղթի:

Օդի ջերմաստիճանը

Բնակավայրի բաց. բարձր.	Միջին ամսական, ըստ ամիսների												միջին տարեկան	բացարձակ նվազագույն	բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արթիկ 1750 մ	-7.4	-6.1	1,3	5,8	10,9	14,4	18,2	18,1	14,4	8,2	2,0	-4,4	6,1	-26	37

Օդի խոնավությունը

Բնակավայրը	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												միջին տարեկան	միջին ամսական ժ. 13-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենաց բարձր ամսվա	ամենաց ցածր ամսվա
Արթիկ	73	72	75	64	64	64	60	56	57	63	71	74		68	45

Մթնոլորտային տեղումները և ձյունածածկույթը

Բնակավայրը	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												տարեկան	տասնօրյա առավելագույնը	ձյան ծածկ- ույթը	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			օրերի թիվը զրի առավելագույն ընթացքով	ձյան մեջ մնացածը
Արթիկ	23/22	28/22	38/23	67/30	98/36	89/51	54/51	46/47	31/37	52/50	33/43	23/50	582/51	80	95	96

Քամի

Արթիկ		Բնակավայրը	
827		Մթնոլորտային ճնշումը ԳՊԱ	
		Տարվա ամիսը	
		Քամու ուղղությունների կրկնելիությունը % Քամու միջին արագությունը մ/վրկ	
		ըստ ուղղությունների	

3.6 Ջրային ռեսուրսներ

Ուսումնասիրվող տարածքը պատկանում է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքին:

Ախուրյանի ՋԿՏ-ը ներառում է Ախուրյանի և Մեծամորի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը: 2022 թվականին Ախուրյանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 40%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Ախուրյան գետի՝ Ամասիայից ներքև, Գյումրիից վերև և ներքև դիտակետերի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 5-րդ դաս: Աղտոտված գետերից են Ախուրյանը և Կարկաչունը: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որից 19-ում՝ նաև որակի մոնիթորինգ: 2021 թվականին այս ջրավազանից ջրօգտագործումը կազմել է 729.7 մլն մ3, որից 71%-ը բաժին է ընկնում մակերևութային ջրերին, 29%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (79%), ձկնաբուծության (17%), արտադրական և ծմելու (2-ական %) նպատակներով:

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Երկու հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 20. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքեր, մ³/վ		
		փաստացի	նորմա	%
Ախուրյան	Ախուրիկ	4.52	7.38	61.2
Մեծամոր	Մեծամոր	2.58	20.2	12.8


Մակերևութային ջրերի որակ

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով: Բազարան գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով: Առողջ գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված արսենով և բորով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով և ընդհանուր ֆոսֆորով:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում՝ «անբավարար» (4-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից

հարավ-արևելք՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով, մանգանով, կախության չոր նյութերով, Ռանչպար գյուղից ներքև՝ նիտրիտ իոնով և բորով:



Գծապատկեր 74. Ախտորյան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախտորյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ իրականացվել է 40 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 19 դիտակետից իրականացվել է նաև նմուշառում՝ ջրի քիմիական ուսումնասիրության նպատակով:

2022 թվականին ծախսի նվազագույն արժեքները N2038 և N2039 դիտակետերում դիտվել է մարտին՝ 1.6 լ/վ, 2.49 լ/վ: Առավելագույն արժեքները նշված դիտակետերում համապատասխանաբար դիտվել են՝ նոյեմբերին 1.88 լ/վ և սեպտեմբերին՝ 2.97 լ/վ: Տարվա ընթացքում ծախսերի տատանումները համապատասխանաբար կազմել են մինչև 15.0% և 16.3%: (հավելված 1): Աշոցքի N2041 դիտակետում տարվա ընթացքում դիտարկվել է համեմատաբար կայուն վիճակ՝ աննշան տատանումներով: Նշված դիտակետերում ջերմաստիճանների տատանումները համեմատաբար մեղմ են (մինչև 6.3%): Ծախսերի տատանումները պայմանավորված են բնական գործոններով:


Ախտորյանի ՋԿՏ-ի մոնիթորինգի դիտակետերը Գյումրիի և Արարատյան գոգավորություններում ներկայացված են բնադրյուններով և հորատանցքերով:



Գյումրիի գոգավորության Առափի գյուղի վարչական տարածքի N2042 դիտակետում, որը գտնվում է Ախտորյան գետի վերին հոսանքի դարավանդում 2022 թվականին գրունտային ջրերի նվազագույն մակարդակը գրանցվել է օգոստոս ամսին (-1.73 մ), իսկ առավելագույնը՝ մարտ-ապրիլ ամիսներին՝ (-1.3 մ) խորությամբ: Շիրակի գոգավորության արևելյան մասում (դիտակետ N2043, գ.Ախտորյան) գրունտային ջրերի մակարդակը տատանվել է 8.31-9.74 մ:

Այս գոգավորության տարածքի որոշ բնադրյուններում բարձր ծախսերը նկատվում են մայիս-հունիս ամիսներին իսկ ցածրը՝ մարտ, օգոստոս ամիսներին (դիտակետեր N2029 Գյումրի Չերքեզի ձոր, N2031 Գյումրի Վարդգաղ):


Ստորերկրյա ջրերի ծախսի և մակարդակի տատանումները զգալի են Ախուրյանի ՋԿՏ-ում ընդգրկված Արարատյան գոգավորության (կամ Արարատյան արտեզյան ավազանի) դիտակետերում:

Ախուրյանի ՋԿՏ-ի 19 դիտակետում 2022 թվականի մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ: Այս ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման տատանումները կազմել են 0.084-1.9 գ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիայի տատանումները՝ 0.2-59.4 մգ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիաների տատանումները՝ 1.8-976.2 մգ/լ, արսենի կոնցենտրացիայի տատանումները՝ 0.001-0.21 մգ/լ: Հանքայնացման գերազանցումներ դիտվել են գյ. Լուսազյուղի N2022 և գյ. Առափիի N2042 գրունտային ջրհորներում, գյ. Արտանետի N2083 հորատանցքում: Նիտրատ իոնի կոնցենտրացիայի գերազանցումներ դիտվել են գյ. Մարմաշեն N2035 աղբյուրում և գյ. Առափիի N2042 գրունտային ջրհորում: Սուլֆատ իոնի կոնցենտրացիայի գերազանցումներ դիտվել են գյ. Արտանետի N2083 հորատանցքում և գյ. Առափիի N2042 գրունտային ջրհորում: Արսենի կոնցենտրացիայի գերազանցումներ դիտվել են գյ. Ապագաի N2020 և գյ. Լուսազյուղի N2022 գրունտային ջրհորների և գյ. Բամբակաշատի N2024 հորատանցքի դիտակետերում: Պղնձի և կապարի կոնցենտրացիաների տատանումները համապատասխանաբար կազմել են 0.0002-0.008 մգ/լ, 0.0001- 0.007 մգ/լ, և չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:







Գծապատկեր 76. Ախուրյանի ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2021-2022թթ.




Գծապատկեր 77. Ախուրյանի ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2021-2022թթ.




Գծապատկեր 78. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը 2021-2022թթ.




Գծապատկեր 79. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակը 2021-2022թթ.



Գծապատկեր 80. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում հանքայնացման փոփոխությունը, 2022թ.




Գծապատկեր 81. Ախտորյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում նիտրատ իոնի կոնցենտրացիան, 2022թ.



Գծապատկեր 82. Ախտորյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում սուլֆատ իոնի կոնցենտրացիան, 2022թ.

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



3.7 Բուսական և կենդանական աշխարհ

Ինտենսիվ մարդկային գործունեությունը բացասաբար է ազդել Հայաստանի հարուստ կենսաբազմազանության էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների վրա: Լինելով ամենաընդարձակ տնտեսական գործունեության ոլորտներից մեկը՝ ընդերքօգտագործումը ամենաշատն է ազդում բնական բաղադրիչների հավասարակշռության վրա՝ վտանգելով տարածքի էկոհամակարգը և կենսաբազմազանությունը:

Ծրագրավ նախատեսված տարածքների կենսաբազմազանությունը երկար ժամանակ ենթարկվել են հանքարդյունաբերական աշխատանքների հետևանքով առաջացած վնասակար ազդեցությունների:

Շրջակա միջավայրի վրա աղդեցության նախնական գնահատման հայտով առաջարկված փակված քարհանքի տարածքում լանդշաֆտի բարելավման աշխատանքները՝ անտառպուրակի և հանգստի գոտու հիմնումը ամբողջովին ունեն բնապահպանական նշանակություն և միտված են կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև Արթիկ քաղաքի համար ներկայումս առկա բնապահպանակն հիմնախնդրի լուծմանը /տարածքում և հարևանությամբ առկա փոշու օջախների վերացմանը/: Ծրագրով նախատեսված միջոցառումները՝ տարածքի ծառապատումը, ծառերի և թփերի ընտրությունը կատարվել է ելնելով բուսատեսակների աճման և զարգացման առանձնահատկություններից, բնակլիմայական պայմաններից և մի շարք այլ էկոլոգիական գործոններից:

3.7.1 Բուսական աշխարհ

Արթիկի տարածաշրջանը հիմնականում ներկայացված է տափաստաններով, որոնք շատ տեղերում փոխվում են մարգագետնային տափաստանների: Արթիկի շրջանում, ինչպես ամբողջ Շիրակի մարզում, բուսական աշխարհը խիստ բազմազան է: Դրան նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Արթիկի մոտակայքում մեծ տարածք է զբաղեցնում լեռնատափաստանային բուսականությունը: Տափաստանային բուսականությունն այստեղ առաջացնում է չոր, բարեխառն-խոնավ, տիպիկ տափաստանային և խոնավ մարգագետնատափաստանային բուսական խմբակցություններ:

Լեռնատափաստանային բուսականությունը տարածվում է 1600-2200 մետր բարձրությունների վրա: Տափաստանային և տրազականտային տափաստանային բուսականության զգալի մասը ներկայումս չի պահպանվել, քանի որ տարածքը գրեթե ամբողջովին հերկված է: Բնական բուսածածկույթը պահպանվել է միայն կղզյակների ձևով: Այս տափաստաններում գերակշռում են հացազգիները՝ կազմված հիմնականում փետրախոտերից, որոնց հետ կան նաև շյուղախոտեր և բազմաթիվ տարախոտեր՝ ուրցը, երեքնուկը, պնակախոտը, հազարատերևուկը, որոնց տակ հողերը ուժեղ ճմակալված են:

Լեռնային տափաստաններն այստեղ օգտագործվում են որպես խոտհարքներ և արոտներ: Շյուղախոտային տափաստանների բերքատվությունը փետրախոտային տափաստանների համեմատությամբ բավականին ցածր է, և դրանք հիմնականում կարելի է օգտագործել որպես արոտներ:

Լեռնաչորասեր բուսականությունը, որը հանդես է գալիս չոր տափաստանային, լեռնատափաստանային, մասամբ նաև մարգագետնատափաստանային գոտիներում, որոշ տեղանքներում առաջացնելով տրագականտային տափաստաններ և տրագականտներ: Նշված բուսական խմբակցությունների զարգացման և տարածման գործում որոշակի դեր են խաղացել մի շարք համալիր գործոններ: Դրանք են՝ քարքարոտ հողագրունտների առկայությունը, մայրական ապարների ելքերը, քարացրոնների ու քարաթափվածքների տարածումը, անասունների ինտենսիվ, ոչ կանոնավոր արածեցումը, հողային ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործումը և վերջապես էրոզիոն երևույթների տարածումը:

Այդ գործոնները նպաստել են տափաստանային առավել օգտակար բուսականության վերացմանը և լեռնաչորասեր բուսականության զարգացմանը (երկրորդական սուկցեսիա):

Լեռնաչորասեր բուսականության արագ զարգացումը կանխելու համար անհրաժեշտ է այդ տարածքներում սահմանափակել կամ արգելել անասունների արածեցումը:

Մարգագետնատափաստանային գոտին ձգվում է մերձալպյան (ստորին ալպյան) մարգագետինների և լեռնային տափաստանների միջև, 2000-2300մ բարձրությունների վրա: Մարգագետնատափաստանային բուսականությունն զբաղեցնում է Արագածի լեռնագանգվածի հյուսիսային լանջերը: Խոտածածկում բացի տիպիկ տափաստանային տեսակներից հանդիպում են մարգատետնային բուսատեսակներ, բարձրախոտ, ճամածակույթ ստեղծող հացազգիներ և բոշխեր: Դրանք գլխավորապես կարելի է օգտագործել որպես խոտհարքներ:

Արթիկի շրջանում տարախոտային- մարգագետնատափաստանային բուսական խմբակցություններում զգալի են հացազգիները, որոնք առաջացնում են խիտ ճիւղ, գերակշռող ներկայացուցիչներն են՝ ուրցը, քոսքսուկը, աբեղախոտը, երեքնուկը, ոջլախոտը, մակարդախոտը, եղեսպակը և այլն:

Հաճախ տարախոտային մարգագետնային տափաստաններում հանդիպում են ընդավոր-հացազգի-տարախոտային բուսատեսակների մարգագետնային տափաստաններ, որտեղ իշխում են երեքնուկի տարբեր տեսակները (իշառվույտ, առվույտ և այլն):

Ստորև, աղյուսակում բերված են Արթիկի տարածաշրջանում պահպանության կարիք ունեցող բուսատեսակները:

Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակն ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1- անհետացման վտանգի տակ գտնվող, 2 – հազվագյուտ):

Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

Հ/հ	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակ
	Լատիներեն	Հայերեն	
1	Centaurea Takhtajanii	Տերեփուկ Թախտաջյանի	1
2	Hieracium pannosum	Ճառակախոտ փրչոտ	1
3	Campanula Massalskyi	Զանաւկ Մասալսկու	2
4	Cephalaria Tchihatchevii	Ջիվան Չիխաչովի	2
5	Astragalus Massalskyi	Գազ Մասալսկու	2
6	Alcea Sophial	Տուղտավարդ Սոֆիայի	1
7	Rheum Ribez L.	Խավրժիլ հաղարջանման	1
8	Teucrium canum	Լերդախոտ ալեհեր	1
9	Rubiaceae	Տորոնազգիներ	1

Բուսական ծածկույթի պահպանման համար առաջնահերթ միջոցառումները հետևյալն են.

- Կերահանդակների (արոտներ, խոտհարքեր) բարելավում և ուսցիոնալ օգտագործում,
- Արոտների, խոտհարքների ջրարբիացում, պարարտացում,
- Մոլախոտերի, թունավոր բույսերի ոչնչացում,
- Խոտհարքներում հունձի ժամկետների պահպանում,
- Արոտներում և խոտհարքներում անասնաճանապարհների ստեղծում:
- Անտառտնտեսության զարգացման լայն ծրագրի մշակում:

3.7.2 Կենդանական աշխարհ

Ի տարբերություն բուսական համակեցությունների՝ կենդանատեսակները բարձր շարժունակության հետևանքով ունեն միջգոտիական տարածման ընդարձակ արեալ և միաժամանակ կարող են լայն տարածում ունենալ տարբեր լանդշաֆտային գոտիներում: Կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, բարձրլեռնային լայն տարածված կենդանական ձևերով: Տեղական էնդեմիկ ձևերը շատ թույլ են արտահայտված: Տվյալ տարածքի գերիշխող և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Canis lupus* (գայլ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Անհավասարակշռված անտրոպոգեն գերբեռնվածության ներգործության հետևանքով կենդանական աշխարհը կրել է մեծ փոփոխություն, որի հիմնական պատճառը մշակվող հողերի մեծ տոկոսն է, անվերահսկելի որսը, կենդանիների բնական վայրերի ոչնչացումը, թունաքիմիկատների լայն և անվերահսկելի օգտագործումը, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակումը, ինչպես նաև բիոտեխնիկական և պահպանման միջոցառումների բացակայությունը:

Կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1- անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

Հ/հ	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր քրքի անվանում		
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ		ԲՊՄՄ
1	<i>Vormela peregusna peregusna</i>	Հարավոռուսական խայտաքիս	2		-
2	<i>Ciraetus gallicus gallicus</i> Gmelin	Եվրոպական օձակեր	1		-
3	<i>Luscinia svecica occidentalis</i>	Իրանական կապտափող	2		-

4	Lacerta parva Boulenger	Փոքրասիական մողես	1	-
5	Gomphocerus armeniacus	Մորեխի հայկական	1	-

Կենդանական աշխարհի անհրաժեշտ ձևերի պահպանման և վերականգնման համար առաջին հերթին անհրաժեշտ է մշակել ծրագիր՝ բնության հատուկ պահպանվող տարածքների (արգելոցներ, արգելավայրեր), որսի թուլատրվող տեղամասերի ձևավորման, ինչպես նաև նրանց օգտագործման ռեժիմների մշակման համար: Ծրագրով նախատեսված անտառպուրակի և հանգստի գոտու հիմնումը կարող է նպաստել տվյալ տարածքում կենդանատեսակների ավելացմանը և բազմացմանը՝ ստեղծելով վերջիններիս համար նպաստավոր պայմաններ:

Գործունեության ենթակա տարածքների շրջակա բնական էկոհամակարգերում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), որոնց վրա նախատեսվող ծրագիրը կունենա որևէ ազդեցություն: Տարածքին ամենամոտ ԲՀՊՏ-ն <<Արագածի ալպյան>> պետական արգելավայրն է, որը գտնվում է Արագած լեռան 3200-3500 մ բարձրությունում և զբաղեցնում է 300 հա տարածք: Ծրագրով նախատեսված աշխատանքները այդ արգելավայրի վրա որևէ ազդեցություն չեն ունենա:

ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն տարածաշրջանում ամենամոտ գտնվող բնության հուշարձաններն են՝ «Թագավորական» լիճը /որը գտնվում է Շիրակի մարզ, Մանթաշ գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 3050 մ բարձրության վրա/ և «Մանթաշի» ջրվեժները /որը գտնվում է Շիրակի մարզ, Մեծ Մանթաշ գյուղից 16 կմ հվ-արմ, համանուն գետի աջ վտակի վրա/: Նշված բնության հուշարձանները գտնվում են գործունեության ենթակա տարածքից ավելի քան 20 կմ հեռավորության վրա և որևէ կերպ չեն առնչվում նախատեսվող աշխատանքների հետ:

3.8 Վարչական տարածքի սոցիալ տնտեսական և էկոլոգիական բնութագիրը

ՀՀ քաղաքների շարքում Արթիկն իր մեծությամբ և հզորությամբ միջին տեղ է գրավում, իսկ մարզում երկրորդն է՝ Գյումրիից հետո: Քաղաքի սահմաններում պահպանված նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձանները վկայում են, որ այն եղել է Հայաստանի ամենահին և նշանավոր բնակավայրերից մեկը:

Համայնքի տարածքային ռեսուրսները խիստ բարենպաստ են ձմեռային սպորտի (լեռնադահուկային սպորտ, ալպինիզմ և այլն) կազմակերպման համար: Առավել բարենպաստ են Արագածի հյուսիսային, հյուսիս-արևմտյան լանջերը:

Տուֆի հրաշալի շինարարական հատկություններն ընդհանրապես և Արթիկի տուֆը՝ մասնավորապես, հայ ճարտարապետներին հայտնի են եղել շատ վաղուց: Այդ մասին են խոսում թեկուզ միայն Արթիկի փառավոր անցյալի կենդանի վկաներ հանդիսացող 6-7-րդ դարերի ճարտարապետության հոյակապ հուշարձանները: Շրջանը հարուստ է զանազան շինանյութերով՝ տուֆ պեմզա, պերլիտ, հրաբխային խարամ, կավեր և այլն:

Տուֆերի պաշարները գործնականում անսպառ են: Արթիկի տարածաշրջանի տուֆի հանքերը կարևորագույն հումքային բազա են հանդիսանում Հայաստանի բնական շինանյութերի արտադրության համար:

Ներկայումս շահագործվող և վաղուց չշահագործվող հանքավայրերի տարածքները /ներառյալ ծրագրի իրականացման տարածքը, որտեղ նախատեսվում է հիմնել անտառպուրակ և հանգստի գոտի/ և նրանց շրջակայքը տարիների ընթացքում վերածվել են թափոնակույտների դաշտերի, որտեղ իսպառ բացակայում է հողային ծածկույթը և բուսականությունը:

Չնայած, ներկա պահին <<Արթիկտուֆ>> ձեռնարկության արտադրողական ծավալները զգալի նվազել են, բաց երկնքի տակ գտնվող լքված հանքերը հսկայական ծավալների հասնող փոշու աղբյուր են հանդիսանում: Արագածից եկող հյուսիս-արևելյան քամիները հանքերից փոշին ուղղակի ցրում են շրջակա բուսածածկույթի և քաղաքի վրա:

Առաջացել է անլուծելի խնդիր, մի դեպքում ընդերքի օգտագործման տնտեսական արդյունավետության և բնակչության զբաղվածության խնդիրն է, մյուս դեպքում՝ բնակավայրի համար առկա բնապահպանական հիմնախնդիրը՝ մթնոլորտային օդի պահպանության տեսանկյունից:

Քաղաքի տարածքի համար մշակված հատակագծային կազմակերպման գլխավոր միջոցառումներից է բնական-էկոլոգիական գոտիների (էկոլոգիական հավասարակշռված տարածքներ, ռեկրեացիոն տեղամասեր, բնապահպանական տարածքներ, <<բուֆերային>> շերտեր) զարգացումը՝ մարդու տնտեսական գործունեության սահմանափակմամբ և բնական հարստությունների առավելագույն պահպանմամբ:

3.9 Մթնոլորտային օդ

Արթիկ քաղաքում ներկայումս քարերի մշակման և արտադրական ձեռնարկություններից մնացած կազմակերպությունները կամ չեն գործում, կամ գործում են իրենց արտադրողականության չնչին մասով և մթնոլորտային օդի աղտոտվածության վրա էական ազդեցություն չունեն: Օդային և ջրային ավազանի վերաբերյալ ռեժիմային մոնիտորինգ չի իրականացվել ֆինանսների բացակայության պատճառով:

Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի տվյալների համաձայն Արթիկի քաղաքի մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները ներկայումս չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված նորմերը և կազմում են.

ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ³)

Փոշի	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.05
Ածխածնի երկօքսիդ	0.8
Ազոտի երկօքսիդ	0.015

3.10 Պատմության և մշակույթի հուշարձաններ

Արթիկի տարածքը հարուստ է տուրիստական ռեսուրսներով՝ պատմամշակութային, հնագիտական, բնական հուշարձաններով և ձմեռային սպորտի (լեռնադահուկային, ալպինիզմ) կազմակերպման բարենպաստ պայմաններով:

Աղյուսակ N1-ում տրված են Արթիկ համայնքի տարածքում պատմության և մշակույթի հուշարձանները:

Աղյուսակ 1

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	հավելյալ նշումներ
Ամրոց «Հայրենյաց թաղք» (Աղք)	8-17 դդ.	1.5 կմ հվ-ամ	—	8.2/1	
Դամբարանադաշտ	Ք.ա. 3-1 հազ.	ամրոցի շրջակայքում	—	8.2/1.1	
Բնակատեղի	Ք.ա. 3-1 հազ.	1-1.5 կմ հվ-ամ, Լմբատավանքի շրջակայքում	—	8.2/2	
Դամբարանադաշտ	Ք.ա. 3-1 հազ.	բնակատեղիի շրջակայքում	—	8.2/2.1	
Բնակելի տուն	1899 թ.	Ձերժինսկու փող. 22	—	8.2/3	
Բնակելի տուն	1938 թ.	Հոկտեմբերյան փող. 32	—	8.2/4	
Գյուղատեղի	10-13 դդ.	1-1.5 կմ հվ-ամ, Լմբատավանքի շրջակայքում	—	8.2/5	հին բնակատեղիի տարածքում
Վանական համալիր՝ Լմբատավանք	4-14 դդ.	1 կմ հվ-ամ, ԲԼԻ վրա	40°36'30" հս. . լ. 43°57'28" ավ. ե. 	8.2/5.1	
Գերեզմանոց	7-14 դդ.		—	8.2/5.1.1	
Եկեղեցի	4-5 դդ.	Սբ. Ստեփանոս եկեղեցու կողքին	—	8.2/5.1.2	միանավ բազիլիկ
Եկեղեցի Սբ. Ստեփանոս	6-7 դդ.	համալիրի կենտրոնում	—	8.2/5.1.3	խաչաձև, կենտրոնագմբեթ
Որմնանկարներ	6 դ.	Եկեղեցու խորանում	—	8.2/5.1.3.1	մնացորդներ
Նախասրահ	6 դ.	Եկեղեցու ամ	—	8.2/5.1.3.2	ավերված

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	հավելյալ նշումներ
		կողմում			
Տապանաքար Յոհանիսի	13-14 դդ.	Եկեղեցու աե պատի տակ	—	8.2/5.1.3.3	
Խաչքար	13 դ.		—	8.2/5.1.4	
Կառույցներ՝ օժանդակ	7-13 դդ.		—	8.2/5.1.5	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	4 կմ ամ	—	8.2/6	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	3 կմ ամ	—	8.2/7	
Եկեղեցի	ուշ միջնադար	1 կմ հվ-աե, Հատիճի ուղղությամբ	—	8.2/8	Ժայռափոր
Եկեղեցի Սբ. Աստվածածին (Սբ. Մարինե)	5-7 դդ.	քաղաքի մեջ, Սբ. Գևորգ եկեղեցուց 30 մ աե	—	8.2/9	խաչաձև, կենտրոնագմբեթ
Գերեզմանոց	7-19 դդ.	Սբ. Աստվածածին և Սբ. Գևորգ Եկեղեցիների շրջակայքում	—	8.2/9.1	գերեզմանոցն ընդհանուր է Սբ. Աստվածածին և Սբ. Գևորգ Եկեղեցիների համար
Խաչքար	10-11 դդ.	Եկեղեցու մեջ	—	8.2/9.2	բեկոր
Խաչքար	11-12 դդ.	Եկեղեցու մեջ	—	8.2/9.3	
Խաչքար	11-12 դդ.	Եկեղեցու մեջ	—	8.2/9.4	բեկոր
Խաչքար	12-13 դդ.	Եկեղեցու մեջ	—	8.2/9.5	բեկոր
Խաչքար	12-13 դդ.	Եկեղեցու մեջ	—	8.2/9.6	բեկոր
Եկեղեցի Սբ. Գևորգ (Սբ. Լուսավորիչ)	6-7 դդ.	քաղաքային հրապարակից 150 մ աե	—	8.2/10	խաչաձև, քառախորան, կենտրոնագմբեթ
Բնակելի շինություն	19 դ.		—	8.2/10.1	
Խաչքար	13 դ.	Եկեղեցու մեջ	—	8.2/10.2	
Հուշակոթող Երկրորդ աշխարհամարտ	1965 թ.	քաղաքային հրապարակում	—	8.2/11	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	հավելյալ նշումներ
ում գոհվածներին					
Հուշակոթող Խորհրդային Հայաստանի 40- ամյակին	1960 թ.	ամ մասում «Բարեկամությ ան» այգու դիմաց	—	8.2/12	
Հուշակոթող Մայիսյան ապստամբությա ն գոհվածներին	1960 թ.	հվ-ամ մասում, բլրի վրա	—	8.2/13	
Հուշաղբյուր	1918 թ.	քաղաքի մեջ, Կամոյի փող. վրա	—	8.2/14	
Հուշաղբյուր	1945 թ.	քաղաքի մեջ	—	8.2/15	
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտ ում գոհվածներին	1970 թ.	քաղաքի մեջ, ավտոկայանի մոտ	—	8.2/16	
Հուշարձան Քարհատ բանվորին	1965 թ.	1 կմ ամ	—	8.2/17	
Հուշարձան Խ. Աբովյանին	1946 թ.	ամ մասում, գրոսայգում	—	8.2/18	
Հուշարձան Շ. Ռուսթավելուն	1946 թ.	ամ մասում, «Բարեկամությ ան» այգում	—	8.2/19	
Ձիթհան «Իգիթյանների»	19 դ.	տեխնիկումի բակում	—	8.2/20	
Զբաղաց	19 դ.	Մ. Մողրովյանի տան դիմաց	—	8.2/21	

Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման աշխատանքներն չեն իրականացվելու:

3.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ըստ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 967-Ն որոշման Արթիկի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ բացակայում են:

Ստորև ներկայացվում է Շիրակի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքների ցանկը համաձայն 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 967-Ն որոշման:

Երկրաբանական հուշարձաններ

51. «Ամասիայի» քարանձավ	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.5 կմ արլ, Ախուրյան գետի կիրճի աջ ափին, նրա հունից 80 մ բարձրության վրա, ծ.մ-ից 2000 մ բարձրության վրա
52. «Կրիա» քարե բնական քանդակ	Շիրակի մարզ, Երևան-Գյումրի խճուղու ձախ կողմում, Լանջիկ և Մարալիկ բնակավայրերի միջև

Ջրաերկրաբանական հուշարձաններ

